ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆԱԱՌԱՋԱՎՈՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

ՍՍՌՄ-Ի, ՀԱՅԿԱԿԱՆ, ՎՐԱՑԱԿԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՍԵՍԻԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՔԱՌԱՄՅԱԿԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ՃԱՌԸ

Թանկագին ընկերնե՛ր։

ՍՍՌ Միության Գիտությունների ակադեմիայի, Վրացական, Ադրբեջանական և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիաների հորելյանական համատեղ սեսիան նվիրված է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Սովետական Միության մեր փառապանծ Կոմունիստական պարտիայի հավատարիմ մարտական ջոկատներից մեկի՝ Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման քառասուներորդ տարեդարձին։

Ուրախալի է նշել, որ հորելյանական սեսիա ժամանել մեր բազմազգ Սովետական Միության եղբայրական ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների ներկայացուցիչները՝ երկրի ականավոր գիտնականներ։ Մեզ ուրախացնում է, որ հորելյանական սեսիայի նախագահության սեղանի շուրջը տեսնում ենք ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ականավոր գիտնական, մեծարգո ընկեր Ալեքսանդր Նիկոլաևիչ Նեսմեյանովին։ (Ծափահարություններ)։

Սովետական Հայաստանի մայրաքաղաքում ՍՍՌՄ-ի և Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների սույն համատեղ սեսիայի գումարումը և նրա աշխատանքին մեր անծայրածիր Հայրենիքի ամբողջ գիտական հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությունը մեր երկրի եղբայրական ժողովուրդների անխախտ միասնության վկայություններից մեկն է, իսկ հայ ժողովրդի տոնը ամբողջ սովետական ժողովրդի համաժողովրդական տոնն է։

Թույլ տվեք Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և Մինիստրների Սովետի անունից, ռեսպուբլիկայի բոլոր աշխատավորների անունից ողջունել ձեզ՝ հորելյանական սեսիայի մասնակիցներիդ, և հաջողություն ցանկանալ ձեր վսեմ աշխատանքին։ (Ծափահարություններ)։

Ընկերնե՛ր։ Ընդամենը 40 տարի է անցել այն օրից, երբ Հայաստանի ապստամբած բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ տապալեցին Արևմուտքի իմպերիալիզմի գրածոների, հայ ժողովրդի դավաճանների, բուրժուական նացիոնալիստների՝ դաշնակների տիրապետությունը և հաստատեցին Սովետական իշխանություն։ Իր ազատ և երջանիկ կյանքի համար մղվող հերոսական պայքարում հայ ժողովուրդը, միութենական եղբայրական ռեսպուբլիկաների բոլոր ժողովուրդների հետ սերտ դաշինք կնքած և ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, 40 տարում արմատապես վերափոխել է իր երկիրը և հսկայական հաջողությունների հասել կոմունիստական շինարարության ասպարեզում։ Ցարական Ռուսաստանի երբեմնի ամենահետամնաց, ագրարային ծայրամասերից մեկը՝ Հայաստանը, Սովետական իշխանության տարիներին ամբողջովին վերափոխվել է։ Հայաստանը դարձել է առաջավոր, զարգացած ինդուստրիա ունեցող ռեսպուբլիկա՝ արդյունաբերության այնպիսի կարևոր ճյուղերով, ինչպիսիք են գունավոր մետալուրգիան ու քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունն ու հաստոցաշինությունը, էլեկտրատեխնիկական արդյունաբերությունն ու սարքաշինությունը, շինանյութերի արդյունաբերությունը, թեթև ու սննդի արդյունաբերությունը։ Ռեսպուբլիկայի արդյունաբերության ձեռնարկությունները զինված են բարձր արտադրողական ժամանակակից սարքավորումներով ու մեքենաներով, որոնք Սովետական Միությունում ըստեղծվել են ըստ տեխնիկայի վերջին խոսքի։ Սովետական Հայաստանն այսօր դարձել է մի այնպիսի ռեսպուբլիկա, որը մեքենաներ, ունիկալ հաստոցներ, սարքեր և այլ արտադրանք է մատակարարում Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաներին, երկրամասերին ու մարզերին, ինչպես նաև արտասահման տասնյակ երկրներ։

Արմատապես փոխվել է գյուղի դեմքը։

Ժամանակակից մեքենաներով ու մեխանիզմներով կոլտնտեսությունների և սովխոզների զինումը հեշտացրել է գյուղացու աշխատանքը, այն անհամեմատ ավելի արտադրողական դարձրել։ Մեր պարտիայի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ սոցիալիստական գյուղատնտեսությունը թևակոխել է իր զարգացման նոր ժամանակաշրջանը՝ գյուղատնտեսական արտադրության բոլոր ճյուղերի շեշտակի վերելքի ժամանակաշրջանը։

Սովետական իշխանությունը բացեց կուլտուրայի ծաղկման լայն հնարավորություններ և հայ ժողովրդի մեջ բուռն ձգտում արթնացրեց դեպի գիտությունն ու լույսը։ Դրա շնորհիվ անցյալի կուլտուրական հարուստ ժառանգությունը միայն սովետական շրջանում դարձավ ժողովրդի լայն զանգվածների իսկական սեփականությունը։ Դա ապահովեց մեր ժողովրդի կուլտուրայի արագ զարգացումը՝ իր ամենաբազմազան ձևերով, ճշմարտացիորեն արտացոլելով նրա հերոսական կյանքի պատկերը։

Ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի վերելքը, դպրոցների ցանցի ընդարձակումը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ստեղծումն ու զարգացումը լայն հնարավորություններ բացեցին գիտության ու տեխնիկայի զարգացման համար։ Մի ժամանակ Հայաստանում գիտական աշխատողների թիվը սահմանափակվում էր մի քանի տասնյակ գրականագետներով, պատմաբաններով ու հայագետներով։ Այն սակավաթիվ մարդկանց, որոնց հաջողվում էր գիտելիքներ ձեռք բերել տեխնիկական գիտությունների ասպարեզում, վիճակված չէր աշխատելու իրենց Հայրենիքում։ Գրությունն այլ է այժմ։ Սովետական իշխանության տարիներին տեղի ունեցան արմատական տեղաշարժեր, աճեց գիտական աշխատողների մի ամբողջ բանակ, որն օժտված է գիտության, կուլտուրայի, տեխնիկայի և արտադրության բոլոր բնագավառների խոր գիտելիքներով։

Արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի ուժգին վերելքը պայմանավորեցին գիտական աշխատանքը լայնորեն ծավալելու, գիտահետազոտական հիմնարկների մեծ ցանց ստեղծելու և ռեսպուբլիկայում Գիտությունների ակադեմիայի կազմակերպման անհրաժեշտությունը։

Հետադարձ հայացք գցելով անցած ուղու վրա, գնահատելով 40 տարի առաջ տեղի ունեցած իրադարձության նշանակությունը և վերլուծելով Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, Սովետների երկրի ժողովուրդների եղբայրական համագործակցությամբ Սովետական Հայաստանի բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի քառասնամյա պայքարի արդյունքները, մենք հպարտությամբ նշում ենք, որ անցած ուղին եղել է հայ ժողովրդի իսկական ազգային վերածնության ժամանակաշրջան։

Հայ ժողովրդի էկոնոմիկայի ու կուլտուրայի ծաղկումը սովետական հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափությունների դրսևորման վառ օրինակներից մեկն է, օրինաչափություններ, որոնք հատուկ են միութենական եղբայրական բոլոր ռեսպուբլիկաներին և հանդիսանում է Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի օրինակ։ Այն կարող է փայլուն օրինակ ծառայել Ասիայի և Աֆրիկայի ստրկացված ժողովուրդների համար։ «Մենք հպարտանում ենք,— ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 15-րդ սեսիայում ասաց Ն. Ս. Խրուշչովը,— որ Ռուսաստանի նախկին ծայրամասերի փորձով ապացուցվել է, որ Արևելքի երկրները լիակատար հնարավորություն ունեն մեկ սերնդի կյանքի ընթացքում վերջ տալու հետամնացությանը, աղքատությանը, հիվանդություններին, տգիտությանը և բարձրանալ տնտեսապես առաջավոր երկրների մակարդակին»։

Ընկերնե՛ր։ Մեզ անկեղծորեն ուրախացնում են Հայաստանի գիտական աշխատողների սերտ կապերը սովետական բոլոր ռեսպուբլիկաների գիտնականների հետ, որոնց հետ միասին նրանք գիտական աշխատանքի դպրոց են անցել։ Մեզ հատկապես ուրախացնում են նրանց կապերը, գործարար բարեկամությունն ու համագործակցությունը ռուս գիտնականների հետ, որոնցից նրանք սովորել են և սովորում են։

Շատ հաճախ իրենց հետազոտությունների առարկայով և անձնական եղբայրական բարեկամությամբ նրանք կապված են Ադրբեջանի և Վրաստանի գիտական աշխատողների հետ։ Ուստի Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 40-ամյակին նվիրված համատեղ հորելյանական սեսիայի գումարման փաստը միանգամայն բնական է մեզ համար։ Ռեսպուբլիկայի աշխատավորների աչքում ՍՍՌՄ-ի և Անդրկովկասի ռեսպուբլիկաների Գիտությունների ակադեմիաների այս սեսիան խորհրդանշում է եղբայրական բոլոր ռեսպուբլիկաների գիտնականների միասնությունը այն վիթխարի խնդիրների լուծման համար մղվող պայքարում, որ սովետական գիտության առջև դրել է ՍՄԿՊ XXI համագումարը։

Սովետական գիտնականները, ինժեներները, տեխնիկներն ու բանվորները համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող գիտական մեծագույն սխրագործություն կատարեցին, ապահովելով հայրենական գիտության առաջնությունը ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու ասպարեզում, ջերմամիջուկային էներգիայի հետազոտություններում։ Նրանք առաջին անգամ իրականացրին տիեզերական տարածության ուսումնասիրման և տիրապետման մասին մարդկության դարավոր երազանքները։ Էլեկտրոնիկայի, հրթիռային տեխնիկայի, ատոմֆիզիկայի ասպարեզում սովետական գիտնականների այդ և մյուս հաջողությունները համաշխարհային գիտության կողմից ճանաչում են գտել որպես արդիականության աչքի ընկնող հայտնագործություններ։ Սովետական գիտնականների այդ հայտնագործություններն արտացոլում են մեր Հայրենիքի ինդուստրիալ հզորությունը և սովետական ժողովրդի իմաստությունը։ Դրանք վիթխարի ներգործություն են ունենում միջազգային հարաբերությունների հետագա զարգացման վրա, բազմապատկում են մեր պետության հզորությունը։ Պատահական չէ, որ սոցիալիստական ու կապիտալիստական սիստեմների մրցության մեջ գիտության ու տեխնիկայի բնագավառում ևս Սովետական Միությունը նվաճում է հաղթանակ հաղթանակի ետևից։

Սովետական ժողովուրդը հպարտանում է իր գիտնականներով և բարձր է գնահատում նրանց շնորհակալ աշխատանքը։ Ահա թե ինչու ՍՄԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովը ՍՄԿՊ XX ու XXI համագումարների և Կենտրոնական Կոմիտեի պլենումների բարձր ամբիոնից սովետական բոլոր գիտնա-

կաններին բազմիցս հայտնել է մեր պարտիայի, կառավարության և ամբողջ սովետական ժողովրդի շնորհակալությունը։

Ընկերնե՛ր։ Սոցիալիստական պետության մեջ գիտության համակողմանի զարգացման և տեխնիկական արագ պրոգրեսի խնդիրները համաժողովրդական խնդիրներ են դառնում։ Որքան մենք ավելի առաջ ենք ընթանում, այնքան ավելի հրատապ են դառնում այդ խնդիրները։ Մեր օրերին, երբ երկիրը թևակոխել է նոր ժամանակաշրջան՝ կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը, գիտության դերը ավելի ու ավելի է մեծանում։ Գիտության նվաճումները հող են նախապատրաստում տեխնիկական հեղաշրջումների համար։ Նրանք հասարակության արտադրողական ուժերը դուրս են բերում ավելի լայն ասպարեզներ։

Յոթնամյակի նոր վիթխարի խնդիրների կատարումը, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը պահանջում են գիտության հարաճուն մասնակցությունը երկրի էկոնոմիկայի բոլոր ընագավառներում։ Գիտությունը կոչված է ապահովել ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման գլխավոր գիծը՝ արտադրության մեքենայացումը և ավտոմատացումը։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Մինիստրների Սովետը ռեսպուբլիկայի գիտական աշխատողների կարևորագույն խնդիրն են համարում գիտահետազոտական աշխատանքի համակողմանի մերձեցումը ժողովրդական տնտեսության նոր, ուժգին վերելքի հրատապ պրոբլեմներին։ Ընդամին մենք նկատի ունենք, որ սխալ է այսպես կոչված մաքուր գիտությունը հակադրել գործնական խնդիրներ լուծող գիտությանը։ Իսկական գիտությունը լուծում է տեսական խոշոր պրոբլեմներ և միշտ ձգտում է այդ պրոբլեմների լուծումը շաղկապել կյանքի պրակտիկ խնդիրների հետ։

Մինչև վերջին ժամանակներս Հայաստանում համեմատաբար արագ էին զարգանում Գիտությունների ակադեմիայի գիտական հիմնարկները։ Այդ հիմնարկներից շատերը իրենց աշխատանքում հասել են մեծ հաջողությունների և այդ պատճառով գտել սովետական լայն հասարակայնության ճանաչումը։

Սակայն ժողովրդա-տնտեսական շատ խնդիրների և հատկապես արդյունաբերության տեխնիկական պրոգրեսի արագացման խնդրի լուծումը մեզնից պահանջեց Գիտությունների ակադեմիայի գիտական հիմնարկներին զուգընթաց գիտատեխնիկական ինստիտուտներ և կոնստրուկտորական բյուրոներ ստեղծել արդյունաբերության մեջ։ Շատ ժամանակ չի անցել, բայց արդեն այսօր կարելի է ասել, որ այդ նորաստեղծ ինստիտուտները հիմնականում ճիշտ են կազմակերպել իրենց աշխատանքը, էական օգնություն են ցույց տալիս ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությանը։ Այդ ինստիտուտների և կոնստրուկտորական բյուրոների ստեղծումը նպաստեց նաև Գիտությունների ակադեմիայի մի շարք հիմնարկների աշխատանքի մոտեցմանը արդյունաբերության պահանջմունքներին։ Մենք պետք է ավելի շատ հոգ տանենք Գիտությունների ակադեմիայի և արդյունաբերության գիտահետազոտական հիմնարկների աշխատանքի ճիշտ զուգակցման մասին, հասնենք այն բանին, որ գիտությունը, հեռանկարային պրոբլեմներ մշակելիս, շարունակ սնունդ տա և բեղմնավոր դարձնի արդյունաբերության ինստիտուտների, գործարանային լաբորատորիաների և կոնստրուկտորական բյուրոների աշխատանքը։ Մեր գիտությունը պետք է կարողանա լուծել վաղվա օրվա լուրջ պրոբլեմները։ Միայն այդպիսի ճիշտ զուգակցումը կապահովի գիտության ու տեխնիկայի զարգացման գլխավոր գիծը։

Գիտության ու տեխնիկայի ժամանակակից զարգացումը և ժողովրդական տնտեսության զարգացման նոր խնդիրները առաջին պլան են քաշում կոմպլեքսային պրոբլեմները։ Օրինակ կարող են ծառայել կառավարվող ջերմամիջուկային ռեակցիաների պրոբլեմը, ամենաբարձր հստակության կիսահաղորդչային նոր նյութերի ստեղծման պրոբլեմը և շատ այլ խնդիրներ։ Գիտության ու տեխնիկայի հետագա զարգացման հետ կոմպլեքսային պրոբլեմների դերը ավելի նշանակալից և հրատապ է դառնում։ Դրանց լուծումը հեղաշրջում է մտցնում գիտության և արտադրության շատ բնագավառներում։ Զուր չէ, որ Մարքսը գիտության նվաճումները մեծ հեղափոխիչներ է անվանել։

Սակայն, ինչպես հայտնի է, յուրաքանչյուր կոմպլեքսային պրոբլեմի լուծումն անհնարին է առանց այն հարցերի մշակման, որոնք վերաբերում են տարբեր շատ մասնագիտություններին։ Էնցիկլոպեդիստ գիտնականների դարը վաղուց է անցել։ Գիտության զարգացման հսկայական տեմպերը հանգեցրել են նոր ճյուղերի առաջացման, որոնք ինքնուրույն նշանակություն են ստացել։ Արմատական տարբերություններ են դրսևորվում անցյալում համասեռ համարված երևույթների և պրոցեսների միջև, որոնք պահանջում են գիտական հետազոտության ավելի նուրբ և հատուկ մեթոդներ, որը, բնականաբար, պահանջից գիտական կադրերի մասնագիտացում։ Ընդամին գիտության ժամանակակից զարգացումը նոր ընդհանուր գծեր է հայտնաբերում, եթե թույլատրելի է այսպես արտահայտվել, գիտությունների սահմանազծում դրսևորվում են տարբեր երևույթներին ներհատուկ պրոցեսներ, հետևաբար, հնարավորություն է առաջանում որոշ գիտությունների հետազոտության մեթոդները կիրառել միանգամայն այլ բնագավառի երևույթների հետազոտության համար։ Ուստի միանգամայն պարզ է, որ կոմպլեքսային պրոբլեմները չեն կարող լուծվել գիտության մեկ բնագավառի գիտնականների կողմից։ Դրանց լուծման համար պահանջվում է գիտական շատ հիմնարկների և տարբեր մասնագիտությունների գիտնականների համատեղ կոորդինացված աշխատանքը։ Անհրաժեշտ է դառնում տարբեր ռեսպուբլիկաներում գտնվող մի շարք մասնագիտացված գիտահետազոտական ինստիտուտների սերտ համագործակցությունը։ Ուստի գիտական հետազոտությունների կոորդինացման հարցը ներկայումս պետական մեծ նշանակություն է ստանում։

Գիտությունների ակադեմիայի, արդյունաբերության ու գյուղատնտեսության ինստիտուտները պետք է ըստ ամենայնի զարգացնեն գիտության նոր ճյուղերը և ընդլայնեն տեսական հետազոտություններն այդ ուղղություններով, անհրաժեշտ «գիտական կուտակմամբ» ապահովել արդյունաբերության ու գյուղատնտեսության մըշտական տեխնիկական պրոգրեսը։ Առանց դրա՝ նրանք չեն կարողանա կատարել իրենց հիմնական խնդիրները, որ առաջադրում է մեր երկիրը։

Գիտությունը պահանջում է լարված աշխատանք։ Այն պահանջում է մարդու բոլոր ուժերը։ Ուստի նոր գաղափարներ և գիտության նոր արդյունքներ կարող են հաջողությամբ ստացվել ստեղծագործական ու լարված մեծ աշխատանքի շնորհիվ։ Գիտության ու տեխնիկայի բեղմնավոր զարգացման համար հատկապես կարևոր նշանակություն է ստանում առավել շնորհալի և ընդունակ երիտասարդ կադրերի լայն ներգրավումը գիտական ստեղծագործության։

Մեր երկիրը հարուստ է տաղանդավոր գիտնականներով։ Սովետական պետությունը միջոցներ չի խնայում գիտության զարգացման համար, բայց մենք ուզում ենք, որ ներդրված միջոցները և մեր մասնագետների ջանքերը ամենամեծ էֆեկտը տան մեր գիտության և էկոնոմիկայի հետագա վերելքի համար։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ մեր երկրում, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման հետ մեկտեղ, լուծվում է նաև մյուս գլխավոր խնդիրը՝ կոմունիստական հասարակարգի մարդու դաստիարակումը։ Այդ առնչությամբ պատասխանատու նոր խնդիրներ են ծառացել հասարակական գիտությունների աշխատողների՝ տնտեսագետների, փիլիսոփաների, պատմաբանների և մյուս մասնագետների առջև։

Մարքսիզմ-լենինիզմը լուսավորում է մարդկության նվիրական նպատակի՝ կոմունիզմի ուղին։ Առաջնորդվելով մարքսիզմ-լենինիզմի ուսմունքով, Կոմունիստական պարտիան դաստիարակել և դաստիարակում է կոմունիզմ կառուցող միլիոնավոր հիանալի մարդկանց։ Նոր խնդիրները պահանջում են կենդանի իրականության խոր ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա գիտականորեն և ստեղծագործաբար ընդհանրացնել սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման համար սովետական ժողովրդի պայքարի պատմական փորձը։

Մենք կարող ենք նշել, որ վերջին տարիներս ռեսպուբլիկայի գիտնականների մի շարք աշխատություններ նվիրված էին սովետական հասարակության զարգացման պրոբլեմներին և սովետական շրջանի պատմությանը։ Նրանք, անշուշտ, որոշակի հաջողությունների են հասել այդ մեծ գործում։

Սակայն, դեռևս չի հաղթահարված հասարակական գիտությունների ետմնալը կոմունիստական շինարարության պրակտիկայից։ Նրանք դեռ պատշաճ պրակտիկ հետևություններ չեն արել դոգմատիզմի և տիրացուականության տարրերը հաղթահարելու վերաբերյալ պարտիայի ցուցումներից, բավարար համարձակություն և ստեղծագործական մոտեցում չեն ցուցաբերում դեպի կյանքը, դեպի մասսաների պայքարի փորձը, միանգամայն անբավարար են մշակում տեսական ու գործնական հրատապ հարցերը։ Որոշ աշխատություններում հեղինակները գոհանում են փաստերի արձանագրմամբ, իրադարձությունների ընթացքի հասարակ, պասսիվ նկարագրությամբ։ Նրանք խոր վերլուծություն և տեսական մեծ ընդհանրացումներ չեն կատարում։ Դեռևս չի հաղթահարված թեմատիկայի սահմանափակությունը։

Հասարակական գիտությունը պասսիվ լինել չի կարող։ Հասարակական գիտությունների հիմնարկների և աշխատողների ամբողջ գործունեությունը անխզելիորեն կապված է պարտիայի գաղափարական աշխատանքի հետ, մարքսիզմ-լենինիզմի բոլոր թշնամիների դեմ նրա գաղափարական անհաշտ պայքարի հետ։ Հետևաբար, տնտեսագետները, փիլիսոփաները, պատմաբանները և մյուս գիտնականները պետք է իրենց զգան որպես մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների պաշտպանության դիրքերում կանգնած աշխուժ ժամապահներ։ Եվ մենք իրավունք ունենք հասարակական գիտությունների բոլոր աշխատողներից պահանջել մեր դարաշրջանի ածած պահանջներից բխող գիտահետազոտական աշխատանքների գիտական ու տեսական բարձր մակարդակ։

Հասարակական գիտությունների աշխատողների առջև կանգնած են սովետական հասարակության զարգացման և ժամանակակից միջազգային զարգացման օրինաչափությունների գիտական մշակման լուրջ խնդիրներ։ Այնպիսի հարցեր, ինչպիսիք են կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման ուղիները, սոցիալիստական արտադրական հարաբերությունների կատարելագործումը, Սովետական պետության զարգացումը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում, կոմունիստական գիտակցության ու բարոյականության դաստիարակումը, սոցիալիստական ազգերի զարգացումը, ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդումը և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի դաստիարակումը, գաղութակալության լծից ազատագրված երկրների հետագա զարգացման ուղիները և այլ հարցեր պետք է գտնվեն հասարակական գիտությունների հիմնարկների գիտական աշխատանքի կենտրոնում։

Թանկագին ընկերնե՛ր։

Այսօր մենք գոհունակությամբ ենք նշում Գիտությունների ակադեմիայի գիտահետազոտական ինստիտուտների, արդյունաբերության ու գյուղատնտեսության ճյուղային ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների հիանալի գիտական հաջողությունները։ Բայց դա չի կարող հանգստացնել մեզ։ Անհրաժեշտ է էլ ավելի ուժեղացնել գիտական հիմնարկների աշխատանքը, ապահովել գիտության հետագա ծաղկումը։

Ժողովուրդը իրավամբ հպարտանում է մեր գիտնականների աշխատանքի արդյունքներով, բայց նա ձեզանից միաժամանակ սպասում է ջանքերի է՛լ ավելի մեծ լարում ի բարօրություն մեր սիրելի Հայրենիքի։ Դրա երաշխիքն է Սովետական Միության փառապանծ Կոմունիստական պարտիայի և նրա լենինյան Կենտրոնական Կոմիտեի իմաստուն ղեկավարությունը, որին գլխավորում է հավատարիմ լենինյան Ն. Ս. Խրուշչովը։ Դրա երաշխիքն է սովետական գիտնականների սերտ համախմբվածությունը իրենց հարազատ Կոմունիստական պարտիայի շուրջը, նրանց պատասխանատվությունը անդադրում ստեղծագործելու հանուն մեր երկրում կոմունիզմի հաղթանակի։ (Ծափահարություններ)։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 40 ՏԱՐՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԻՑ

Այս տարվա նոյեմբերի 29-ին լրանում է Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 40 տարին։

Հայաստանի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, իրենց ձեռքը վերցնելով իրենց բախտը, հաստատելով Սովետների իշխանություն երկրում ապահովեցին խաղաղություն և ստեղծագործ աշխատանքի հնարավորություն։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայ ժողովուրդը բազում դարերի ընթացքում առաջին անգամ իր բոլոր ստեղծագործ ուժերը ծավալելու հնարավորություն ստացավ։ Սկսվեց բնական հարստությունների պլանաչափ օգտագործումը։ Քառասուն տարում Հայաստանում ստեղծվեց ժամանակակից հզոր արդյունաբերություն։

Մեծապես առաջ շարժվեց սոցիալիստական գյուղատնտեսությունը։

Ինչպես Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաներում, այնպես էլ Հայաստանում մենք ականատես ենք կուլտուրայի բուռն ծաղկմանը և գիտության արագ զարգացմանը։

Հայաստանը այս բոլոր նվաճումներով նախ և առաջ պարտական է Սովետական Միության Կոմունիստական պարտիային և նրա մարտական ջոկատներից մեկին՝ Հայաստանի Կոմունիստական պարտիային, սովետական բոլոր ժողովուրդների եղբայրական օգնությանը, մեր երկրում կոմունիզմի կառուցման համար պայքարող աշխատավոր հոծ զանգվածների ըստեղծագործական հսկայական խանդավառությանը։

Սովետական Հայաստանում գիտության զարգացումը քառասուն տարվա հսկայական ստեղծագործական աշխատանքի դրսևորումներից մեկն է։

Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում, չնայած կյանքի անլուր դժվարին պայմաններին, աշխարհին տվել է մի շարք հոյակապ գիտնական-հետազոտողներ, որոնք գիտությունը հարստացրել են մեծարժեք աշխատություններով։

Սակայն նախքան Սովետական իշխանության հաստատումը, այնուհետև ասում է ընկ. Համբարձումյանը, բուն Հայաստանում պայմաններ դեռևս խիստ աննպաստ էին գիտական աշխատանքի համար։ Հայաստանի ներկա տերիտորիայում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն կամ գիտական հիմնարկ։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո անմիջապես հիմնադրվեց Երևանի Պետական համալսարանը, որը դարձավ երիտասարդ ռեսպուբլիկայի գիտական մտքի առաջին օջախը։ Արագորեն զարգացող ժողովրդական տնտեսությունը հետագայում պահանջեց կազմակերպել տարբեր մասնագիտությունների տեր մեծաքանակ կադրերի պատրաստումը։ Ուստի երեսնական թվականների սկզբներից առաջ եկան նոր բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև առաջին գիտահետազոտական ինստիտուտները։

Առաջին երկու տասնամյակում ռեսպուբլիկայի երիտասարդ գիտական միտքը բեռնված էր այն պրոբլեմների վրա, որ առաջադրում էին ժողովրդական տնտեսությունը, հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման ընթացքը։

Սակայն կյանքը պահանջում էր գիտության է՛լ ավելի արագ վերելք։ Անհրաժեշտ էր տեղի գիտական կադրերին օգնել գիտական աշխատանքի է՛լ ավելի լայն կազմակերպման գործում։ Այդ օգնությունը ցույց տվեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան, կազմակերպելով Ակադեմիայի հայկական ֆիլիալ (Արմֆան)։ Արմֆանի սիստեմում հումանիտար գիտություններից բացի, սկսվեց քիմիայի, բուսաբանության, կենդանաբանության, հողագիտության, բուսաբուծության է՛լ ավելի ինտենսիվ մշակումը։ Թույլ էին ներկայացված կամ համարյա թե չէին ներկայացված ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունները։ Սակայն այդ բնագավառում ուժեղացվեց կադրերի պատրաստումը։

ՄՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի և Հայկական ՍՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի որոշումներով 1943 թվականի նոյեմբերին կազմակերպվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։ Գիտությունների ակադեմիայի կազմակերպման որոշումը, որ կայացվեց Հայրենական Մեծ պատերազմի լարված օրերին, ամբողջ հայ ժողովուրդն ընդունեց իբրև իր նվիրական իղձերի իրագործում, իբրև ռեսպուբլիկայում գիտության զարգացման զգալի նախապատրաստական աշխատանքի արդյունք և հայ ժողովրդի կուլտուրայի հետագա աճման նկատմամբ Կոմունիստական պարտիայի հսկայական հոգատարության դրսևորում։

Մտաբերելով իրենց ռեսպուբլիկայի ակադեմիայի կազմակերպման շրջանը, Հայաստանի գիտնականները մեծ երախտագիտությամբ են նշում այն վիթխարի աշխատանքը, որ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան կատարեց Հայաստանում գիտության զարգացման և անհրաժեշտ գիտական կադրերի դաստիարակության ուղղությամբ։ Խոշորագույն ռուս գիտնականները գալիս էին Հայաստան և անմիջականորեն ղեկավարում մեր երիտասարդ գիտնականների հետազոտությունները։ Ոչ միայն մեր գիտաշխատողները, այլև Հայաստանի բոլոր աշխատավորները վառ են պահում հոչակավոր գիտնականներ Նիկոլայ Յակովլևիչ Մառի, Նիկոլայ Իվանովիչ Վավիլովի և Վլադիմիր Լեոնտևիչ Կոմարովի հիշատակը, որոնք Հայաստանում կատարած իրենց աշխատանքով առանձնապես նպաստեցին նրա գիտության զարգացմանը։

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը այնուհետև խոսում է ակադեմիայի աշխատանքի սկսման ժամանակ ռեսպուբլիկայի գիտական կյանքի տարբեր ճյուղերի գործերի վիճակի մասին։

ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՄԵՆԱԱՌԱՋԱՎՈՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

ՍՍՌՄ-Ի, ՀԱՅԿԱԿԱՆ, ՎՐԱՑԱԿԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՍԵՍԻԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՔԱՌԱՍՆԱՄՅԱԿԻՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑՈՒՄԻՑ

Հաշվի առնելով արդյունաբերության արագ զարգացումը, Գիտությունների ակադեմիան առաջին հերթին ուշադրությունը նվիրեց ֆիզիկա-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների զարգացմանը։ Եվ եթե Հայաստանի Գիտությունների ակադեմիայի գեմքն այսօր որոշում են հենց այդ ուղղությունները, ապա դա վերջին 16 տարում դրանց զարգացման ուղղությամբ կատարված համառ ու բեղմնավոր աշխատանքի արդյունքն է։ Արդեն սոսկ թվարկումը ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների այն բնագավառների, որոնց ուղղությամբ ակտիվ հետազոտական աշխատանք է կատարվում, կարող է մի որոշ չափով բնորոշել գիտության այդ բնագավառի դրությունը։ Հայաստանում այժմ մշակվում են տարրական մասնիկների ֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի, տեսական ֆիզիկայի, աստրոֆիզիկայի, աստղագիտության, ռադիոաստղագիտության, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, կիբերնետիկայի, առաձգականության տեսության, պլաստիկության տեսության, հիդրոդինամիկայի և ուրիշ հարցեր։ Ընդ որում այդ բնագավառներից շատերի աշխատանքը կատարվում է գիտական ճակատի ամենաառաջավոր բնագծում և բազմաթիվ հաջող արդյունքներ է տալիս։

Քննարկվող բնագավառի գիտական աշխատանքի մակարդակի ու հաջողությունների մասին վկայում է իմիջիայլոց նաև մի շարք խոշոր էքսպերիմենտալ սարքերի ստեղծումը, որոնցից շատերը ունիկալ են։ Այսպես. կոսմիկական ճառագայթների ուսումնասիրման համար ստեղծվեցին խոշորագույն մագնիսաղանգված-սպեկտրաչափեր։ Հայաստանում այժմ աշխատում է Միության ամենախոշոր ինտերֆերենցիոն ռադիոաստղադիտակը, որը ծառայում է ռադիոճառագայթման միանգամայն թույլ գիսկրետային աղբյուրների հետազոտմանը, տեղադրված են հզոր լայնանկյուն օպտիկական աստղադիտակներ՝ աստղագիտության հետազոտությունների համար. աշխատում են ունիվերսալ արագագործ էլեկտրոնային հաշվողական մեքենաներ։

Այս բնագավառում ամենամեծ նվաճումը պետք է համարել կադրերի ընտրությունը, որոնք ոչ միայն ընդունակ են հետազոտություններ կատարելու այդքան բարձր տեխնիկական մակարդակով, այլև ստեղծելու այդ տիպի ժամանակակից սարքեր։

Մեր ռեսպուբլիկայի գիտնականներն ու ինժեներները նախագծում և կառուցում են հզոր էլեկտրոնային հաշվողական մեքենաներ, այդ թվում նաև լիովին կիսահաղորդիչներով աշխատող մեքենաներ։

Մեր էլեկտրատեխնիկները ստեղծել են մաթեմատիկական մեծ մեքենա, որը թույլ է տալիս մոդելացնել և հետազոտել այնպիսի բարդ էլեկտրաէներգետիկ սիստեմների երևույթները, ինչպիսիք են Անդրկովկասի միացյալ էներգոսիստեմը և այլն։

Ենթադրվում է, որ հետագայում էլ կընդլայնվի սեփական ուժերով էքսպերիմենտալ խոշոր սարքերի և ժամանակակից ճշգրիտ գործիքների ստեղծման պրակտիկան։ Դրան մեծապես նպաստում է վերջին տարիներս սարքաշինական զգալի արդյունաբերության ստեղծումը Հայաստանում։

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությունը բարձր պահանջներ է ներկայացնում Հայաստանի բնական հարստությունների հետազոտմանը։ Ուստի Գիտությունների ակադեմիան շարունակ ուշադրություն է նվիրել երկրաբանական հետազոտությունների զարգացմանը։ Ընդհանրապես, բնականաբար, ուշադրության կենտրոնում պետք է լինեին հանքային երկրաբանության պրոբլեմները, քանի որ հաղվագյուտ և գունավոր մետաղների հանքերը Հայաստանի հանածո հարստությունների առավել արժեքավոր մասն են կազմում։

Հայաստանի երկրաբանների հետազոտությունների և ռեսպուբլիկայի երկրաբանական վարչության վերջին տարիների ծավալած մեծ աշխատանքների գլխավոր արդյունքը եղավ հանքային և ոչ հանքային հանածոների հին հանքավայրերի լիակատար վերագնահատումը և նոր, մեծահարուստ հանքավայրերի հայտնագործումը։ Դրա շնորհիվ Հայաստանը, չնայած իր փոքրը տերիտորիային, դարձել է Սովետական Միության ամենահարուստ գանձարաններից մեկը։ Խոսքը վերաբերում է մոլիբդենի հազվագյուտ մասշտաբի հանքավայրերին, պղնձի երկրաբանական պաշարների բազմակի ավելացմանը, ոսկու հանքավայրերին, նեֆելինային սիենիտների անսահման պաշարներին, որոնք մեր քիմիկոսների և տեխնոլոգների հաջող ջանքերի շնորհիվ դարձել են ալյումինի արդյունաբերության շահավետ հումք, քարաղի, մարմարի, տուֆի, պեմզայի, պեռլիտների և այլ նյութերի հսկայական պաշարներին։

Այս բոլոր հարստությունները հնարավորություն են տալիս առաջիկայում մի քանի անգամ ընդլայնելու գունավոր մետալուրգիան, շինանյութերի և քիմիական արդյունաբերությունը։

Այժմ ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի և Ժողովրդական տնտեսության խորհրդի սիստեմում աշխատում են քիմիայի գիտահետազոտական չորս խոշոր ինստիտուտ, ընդհանրապես ձեռնարկություններին կից մի շարք ինքնուրույն լաբորատորիաներ։ Դրանք կոմպլեկտավորված են բարձրորակ գիտնական քիմիկոսներով, որոնք աշխատում են անօրգանական քիմիայի և մասնավորապես սիլիկատների քիմիայի, օրգանական սինթեզի, պոլիմերների քիմիայի, կենսաբանական ակտիվ միացությունների, հազվագյուտ տարրերի քիմիայի ասպարեզում։ Քիմիկոսները լուրջ ներդրում են կատարում ոչ միայն ռեսպուբլիկայի, այլև ամբողջ Միության քիմիական ինդուստրիայի հետագա զարգացման գործում։

Տեխնիկական գիտությունների բնագավառում պետք է նշել էներգետիկայի, էլեկտրատեխնիկայի, մաթեմատիկական մեքենաշինության, հիդրավլիկայի, հիդրոտեխնիկայի և շինարարական գործի հարցերի ասպարեզում կատարվող ծավալուն հետազոտությունները։

Դրա հետ մեկտեղ պետք է շեշտել, որ քիմիայի մի շարք ճյուղերի հետազոտական աշխատանքը ռեսպուբլիկայում դեռ պատշաճ զարգացում չի ստացել։ Առանձնապես անհանդուրժելի է այնպիսի ճյուղերի ետ մնալը, ինչպիսիք են ռադիոտեխնիկան, կիսահաղորդիչների գիտությունը և ավտոմատ կարգավորման տեսությունը։

Կենսաբանական գիտությունների բնագավառի հետազոտությունները, որոնք սկսվել են արդեն քսանական թվականներին, սկզբում գրեթե բացառապես նկարագրական բնույթի էին, քանի որ նպատակ ունեին ուսումնասիրելու գլխավորապես ռեսպուբլիկայի բուսական և կենդանական աշխարհը։ Կենսաբանական գիտությունների զարգացման այդ առանձնահատկությունը դրսևորվում է նաև մինչև օրս։ Սակայն վերջին տարիներս ավելի և ավելի են ուժեղանում էքսպերիմենտալ հետազոտությունները, այդ թվում քիմիական և ֆիզիկական մեթոդներով կատարվողները։ Հարկավոր է առանձնապես նշել բիոքիմիայի, բույսերի ֆիզիոլոգիայի և կենդանիների ֆիզիոլոգիայի, միկրոբիոլոգիայի և ռադիոբիոլոգիայի աշխատանքների ծավալումը։

Արդեն քսանական ու երեսնական թվականներին Հայաստանում ստեղծվել էին մի շարք գյուղատնտեսական փորձնական և հետազոտական հիմնարկներ։ Ժամանակի ընթացքում փորձնական հիմնարկների բազայի վրա կազմակերպվեցին հողագործության, անասնապահության, խաղողագործության ու գինեգործության գիտական խոշոր ինստիտուտներ և ստեղծվեց ագրոքիմիայի մեծ լաբորատորիա։ Այդ ինստիտուտների աշխատանքը սերտորեն կապված է պրակտիկայի պահանջների հետ։ Գիտական այդ կազմակերպությունների աճմամբ նրկատվում է նրանց գործունեության մեջ առավել նոր ֆիզիկա-քիմիական մեթոդների արմատավորման լայն տենդենց, ինչպես նաև է՛լ ավելի մերձեցում գյուղատնտեսական պրակտիկային։

Բժշկական գիտությունների բնագավառում նկատվում է նույն տենդենցը. առավել նուրբ մեթոդների՝ ռենտգենոլոգիական, ռադիորիոլոգիական, բիոքիմիական և այլ մեթոդների վրա խարսխված աշխատանքների ուժեղացումը։ Քանի որ արդի բժշկության մեջ ֆիզիկական, քիմիական և կիբերնետիկ մեթոդների դերը ավելի ու ավելի է մեծանում, ապա կասկածի ենթակա չէ, որ Հայաստանում արագ զարգացող ֆիզիկա-մաթեմատիկական և քիմիական գիտությունների ներգործությունը կբերեցնի բժշկական հետազոտությունների նշանակալից վերելքի և նոր ծաղկման։

Օրգանական քիմիայի, ֆարմակոլոգիայի, բիոքիմիայի և բժշկական գիտության մի շարք բաժինների սահմանագծում ձևավորվել է մարդու օրգանիզմի, կենդանիների և բույսերի վրա էֆեկտիվորեն ներգործող ֆիզիոլոգիապես ակտիվ օրգանական նյութերի սինթեզին և ուսումնասիրությանը նվիրված ուղղությունը։ Այդ պրոբլեմը ինտենսիվորեն մշակվում է Օրգանական նուրբ քիմիայի ինստիտուտում։ Այդ հետազոտությունների միջոցով պարզվել են մի ամբողջ շարք օրինաչափություններ ու մեթոդներ, որոնք հնարավորություն են ընձեռում արդյունավետ կերպով լուծելու առաջադրված խնդիրը, այսինքն ստանալու սելեկտիվ ներգործության պրեպարատներ։

Անցնելով հասարակական գիտությունների զարգացման հարցին, զեկուցողը նշում է, որ մի ժամանակ ռեսպուբլիկայի հասարակական գիտությունների աշխատողների շրջանում տարածվել էր այն սխալ կարծիքը, ըստ որի այդ գիտությունների ասպարեզում աշխատանքները պետք է սահմանափակվեն միայն կամ գլխավորապես հայագիտությամբ։ Դա նշանակում էր գնալ նվազագույն դժվարությունների ճանապարհով, քանի որ մեզանում հայագիտության բնագավառում կան պատրաստի տրադիցիաներ և կադրեր։ Սակայն ռեսպուբլիկայի բուռն կերպով զարգացող տնտեսությունը պահանջում էր ընդլայնել հետազոտությունները սոցիալիստական արդյունաբերության ու գյուղատնտեսության էկոնոմիկայի բնագավառում։ Մասնավորապես հաջողությամբ մշակվեցին կոնկրետ էկոնոմիկայի մի շարք հարցեր։ Երևան եկան առաջին ուսումնասիրությունները արևելագիտության և փիլիսոփայության վերաբերյալ։ Մեր հնագետների հաջողությունները նշանակություն ունեն ոչ միայն հայագիտության, այլև ամբողջ Հին Արևելքի պատմության համար։

Հայ արվեստի պատմության վերաբերյալ ուսումնասիրությունները ուշադրությունը սևեռեցին ժամանակակից կիրառական արվեստի, ժամանակակից սովետական ճարտարապետության հարցերին։

Այս ամենը ոչ միայն չի նվազեցրել հայագիտական աշխատանքների նշանակությունը, այլև, ընդհակառակը, հասցրել է հայագիտության բոլոր բնագավառների, այդ թվում՝ Հայաստանի պատմության, հայոց լեզվի և նրա բազմաթիվ բարբառների, հայ գրականության և արվեստի ուսումնասիրության իսկական ծաղկման։ Եթե անցյալում հայագիտության ասպարեզում արտասահմանում կատարված աշխատանքները մի ինչ-որ չափով մրցակցում էին բուն Հայաստանում հայագետների հետազոտությունների հետ, ապա այժմ արտասահմանում կատարվում է հայագիտական հետազոտությունների միայն աննշան մասը։

Եվ այսպես, եթե Սովետական Հայաստանի գոյության առաջին քսանամյակի ընթացքում մեզանում սկզբի առավ գիտությունը իր արդի ձևերով, երևան եկան որակյալ գիտական կադրեր և ձեռք բերվեցին առաջին հաջողությունները հետազոտական աշխատանքում, ապա հաջորդ քսանամյակի ընթացքում նա, կիրառվող մեթոդներով և խոր հետազոտություններով, մի շարք բնագավառներում սկսեց մոտենալ համաշխարհային գիտության բարձր մակարդակին, սովետական գիտության համար արժանավայել միակ մակարդակին։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ստեղծել և ստեղծում են բոլոր պայմանները, որպեսզի Հայաստանի գիտնականները հաջողությամբ մասնակցեն այդ խնդիրների լուծմանը։

Վերջում զեկուցողը ասում է, որ ներկայումս ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայում ստեղծվել է Գիտության ու տեխնիկայի պատմության խորհուրդ։ Այդ խորհրդի կարևորագույն խնդիրը պետք է լինի Սովետական Հայաստանում գիտության զարգացման պատմության հանգամանալից ուսումնասիրությունը՝ փաստական տվյալների խորազնին քննության հիման վրա։

Դա շատ դժվար խնդիր է, նշում է նա, քանի որ գիտական հետազոտությունների թափն ու բազմազանությունն անընդհատ մեծանում են։

Տիեզերական թռիչքների և կիբերնետիկայի մեր դարում խիստ կրճատվել են գիտական ֆունդամենտալ հայտնագործությունների և նրանց պրակտիկ կիրառման միջև եղած ժամկետները։ Գիտական մեծ հայտնագործության կենսագործումն իր հերթին նոր պահանջներ է ներկայացնում գիտությանը և ստիպում է արագացնել գիտական հետագա պրոբլեմների լուծման տեմպերը։ Դրա հետևանքով մենք պետք է նախատեսենք գիտության ավելի ու ավելի արագացող զարգացում արդի հասարակարգում։ Հատկապես արագ պետք է լինեն գիտության զարգացման առաջիկա տասնամյակների տեմպերը մեր երկրում, որը իր առջև դրել է կոմունիզմի կառուցման խնդիրը։

Գիտական հետազոտությունների պլանավորումը առաջին անգամ մեր մեծ երկրում սկսվեց։ Այդ պլանավորումը մեզ օգնեց գիտության շատ բնագավառների արագ զարգացման գործում։ Սակայն այսօր գիտության պլանավորման խնդիրները հատկապես բարդացել են միմյանց զուգահեռ ընթացող երկու հակադիր պրոցեսների՝ գիսցիպլինների մասնագիտացման և նրանց փոխադարձ ներթափանցման հետևանքով։ Ավելի ու ավելի մեծ չափով առաջին պլան են քաշվում շատ գիսցիպլինների ներկայացուցիչների համատեղ աշխատանք պահանջող պրոբլեմները։ Դրանց պլանավորումը առանձնահատուկ բարդ խնդիր է։

Այդ ամենի հետևանքով գիտության պլանավորումն իսկ պահանջում է խորապես գիտական մոտեցում։ Հետևաբար, հարկավոր է զարգացնել գիտության պլանավորման գիտությունը, ըստ որում այդ գիտության մեջ տարբեր գիսցիպլինների պլանավորման նկատմամբ մոտեցումը կարող է և պետք է միանգամայն տարբեր լինի։

Տարակույս չկա, որ գիտության պլանավորման սկզբունքը սովետական գիտնականներին հետագայում ևս հնարավորություն կընձեռի ապահովելու զարգացման արագ տեմպ և նոր, է՛լ ավելի աշքի ընկնող հաջողություններ։ Ուստի մենք վստահ ենք, որ առաջիկա նոր տասնամյակները կհասցրնեն գիտության վիթխարի ընդլայնման և նոր ծաղկման Սովետական Միության բոլոր ռեսպուբլիկաներում, այդ թվում նաև Սովետական Հայաստանում։ (Ծափահարություններ)։

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ա. Ն. ՆԵՍՄԵՅԱՆՈՎԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Թանկագին ընկերնե՛ր։

Ինձ մեծ պատիվ է վիճակվել ողջունելու գիտությունների չորս ակադեմիաների միացյալ սեսիան, որը նվիրված է Սովետական Հայաստանի և Հայաստանի Կոմունիստական պարտիայի քառասնամյակին։

Ես այսօր առանձնապես ցանկանում եմ շնորհավորել Սովետական Հայաստանի գիտնականներին, որոնք այս տարի նշում են նշանավոր տարեթվեր՝ իրենց սքանչելի ռեսպուբլիկայի քառասնամյակը և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի ըստեղծման 25-ամյակը, որի բազայի վրա Հայրենական Մեծ պատերազմի ծանր տարիներին կազմակերպվեց Գիտությունների ակադեմիան։

Ընդամենը 40 տարի է անցել Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո, բայց նա այդ կարճ ժամանակում ինչպե՞ս է վերափոխվել։ Մենք հենց նոր մի քիչ կարոդացանք ծանոթանալ ձեր ռեսպուբլիկային, բայց այդ էլ միանգամայն բավական էր, որ տեսնենք և գնահատենք ձեր հաջողությունները, գլուխ խոնարհենք ձեր ժողովրդի ստեղծագործ հանճարի առջև։ Այժմ ձեր ռեսպուբլիկան ունի երիտասարդ, սակայն հզոր ու առաջավոր քիմիական արդյունաբերություն, ձեզ մոտ խիստ զարգացած են գունավոր մետալուրգիան, սարքաշինությունը և ծանր ինդուստրիայի այլ ճյուղեր։ Հայաստանի բարձրագույն կրթություն ստացած բնակիչը այժմ արդեն կարիք չունի ինչ-որ այլ տեղ իր մասնագիտությամբ զբաղվելու որոնելու։ Հայաստանում բոլոր հնարավորությունները կան, որ նրա ամեն մի բնակիչ կարողանա մասնակցել սոցիալիստական աշխատանքին։

Այժմ ձեզ մոտ աշխատում է շատ որակյալ ինտելիգենցիայի մի մեծ բանակ, որը գործում է գիտության, տեխնիկայի, բժշկության, մանկավարժության բնագավառներում։ Եթե անդրադառնալու լինենք Հայաստանի գիտությանը, ամբողջությամբ վերցրած նրա կուլտուրային, ապա մենք բոլորս քաջ գիտենք, թե որքան բարձր է հնչում հայ ժողովրդի ձայնը մեր սոցիալիստական հայրենիքի բազմազգ կուլտուրայի հուժկու խմբերգում։ Հայ գիտնականներն ու մասնագետները արդյունավետ կերպով աշխատում են ոչ միայն իրենց ռեսպուբլիկայում։ Ահա ես նայում եմ դահլիճին և այստեղ նստածների մեջ տեսնում եմ լավ ծանոթ շատ հայերի, որոնք այնքան բեղմնավոր կերպով աշխատում են Մոսկվայում,

Լենինգրադում և երկրի այլ խոշոր գիտական կենտրոններում։

1943 թվականից,— ասում է ակադեմիկոս Ա. Նեսմեյանովը,— ձեր ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիան բարգավաճել է և դարձել երկրի գիտական մտքի առաջատար կենտրոններից մեկը։ Ամբողջ Միության մեջ հռչակված է այստեղ, Բյուրականում գտնվող աստրոֆիզիկական աստղադիտարանը։ Այնտեղ լուծվում են առավել բարդ աստղագիտական պրոբլեմներ։ Աստղադիտարանը հագեցված է և սիստեմատիկ կերպով հարստանում է նորագույն հզոր դիտարկման սարքերով։ Հարկավոր է գոհունակությամբ նշել, որ սովետական աստղագիտությունը իր զինվածությամբ այժմ աշխարհում գրավել է երկրորդ տեղը։ Հուսանք, որ նա շուտով կգրավի առաջին տեղը։

Այնուհետև ակադեմիկոս Ա. Նեսմեյանովը կանգ է առնում ֆիզիկայի, մաթեմատիկայի, օրգանական և նուրբ օրգանական քիմիայի բնագավառում աշխատող հայ գիտնականների նվաճումների վրա։ Նա ասում է, որ այդ ճյուղերում Հայաստանի ակադեմիան դուրս է եկել ամենաառաջավոր դիրքերը։

Հայ գիտնականներից, ասում է նա, երիտասարդությունը շատ բան ունի սովորելու։ Այստեղ երիտասարդ կադրերը արագ են աճում։ Այդ է ձեր Գիտությունների ակադեմիայի ապագա հաջողությունների երաշխիքը։

Ես չափազանց կարևոր եմ համարում այն, որ միութենական ռեսպուբլիկաների գիտությունների ակադեմիաները և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիան չկրկնեն միմյանց, այլ գործեն այնպես, որ միասին կազմեն մի հզոր նվազախումբ, որտեղ ներկայացված լինեն բոլոր գործիքները։ Այդ տեսակետից Հայաստանի ակադեմիան լավ օրինակ կարող է ծառայել։ Իրոք, այստեղ յուրաքանչյուր ուղղություն ինքնատիպ է, և դրանցից ոչ մեկը երբեք չի կրկնվում։ Պետք է արդարամտորեն ասել, որ Հայաստանը արժեքավոր շատ բան է ներդրել հայրենական գիտության մեջ։

Ես ամբողջ հոգով ցանկանում եմ ձեր ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիային և ամբողջ հայ ժողովրդին մաղթել հետագա հաջողություններ աշխատանքում, մեր սոցիալիստական Հայրենիքի բարգավաճմանն ուղղված հետագա ջանքեր։

Ձեզ, Վիկտոր Համազասպովիչ, և հանձինս ձեր՝ տաղանդավոր հայ ժողովրդին մաղթում եմ ամենայն լավագույնը, ձեզ մաղթում եմ դեպի կոմունիզմ ընթանալ արագ քայլերով, է՛լ ավելի բարձրացնել հայկական և դրա հետ մեկտեղ սովետական գիտության դրոշը։ (Ծափահարություններ)։

ՎՐՈՅԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ն. Ի. ՄՈՒՍԽԵԼԻՇՎԻԼՈՒ ԵԼՈՒՅԹԻՑ

Թանկագին ընկերնե՛ր։

Ես շատ ուրախ եմ, որ ինձ հնարավորություն է ընձեռվել հանդես գալու այս անչափ հանդիսավոր ժողովում և Վրաստանի գիտնականների կոլեկտիվի անունից եղբայրական Հայաստանի գիտնականներին և ամբողջ հայ ժողո-

վրդին սրտանց ողջունելու ձեր ռեսպուբլիկայի փառապանծ 40-ամյակի առթիվ։

Նախկինում հարստահարված և մասնատված հայ ժողովուրդը, արիությամբ հաղթահարելով պատմության դժնդակ փորձությունները, Սովետական իշխանության տարիներին բռնեց նոր երջանիկ կյանքի կառուցման լայն ուղին, ազգային բուռն վերածնության և բարգավաճման ուղին։

Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության իմաստուն ազգային քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ, աշխատասեր և տաղանդավոր հայ ժողովուրդը պատմական կարճ ժամանակամիջոցում շտեսնված հաջողությունների հասավ ժողովրդական տնտեսության, կուլտուրայի և գիտության զարգացման ասպարեզում։

Հայաստանում գիտությունը իր ընկիզն առնում է հին դարերից։ Հայ ժողովուրդն իր բազմադարյան պանծալի պատմության ընթացքում տվել է ականավոր շատ մտածողներ ու գիտնականներ։ Հայաստանում Սովետական իշխանության հաստատումը անսահման հնարավորություններ բացեց ռեսպուբլիկայի գիտության բուռն զարգացման համար։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, որը դարձել է ռեսպուբլիկայի իսկական գիտական կենտրոնը և ընդամին երկրի առավել խոշոր գիտական կենտրոններից մեկը, իր գոյության երկու տասնամյակից էլ պակաս ժամանակամիջոցում դաստիարակել և կենտրոնացրել է գիտնականների ազգային հիանալի կադրեր, որոնք արժեքավորագույն ավանդ են ներդնում ժամանակակից գիտության շատ ճյուղերի զարգացման մեջ։

Մեզ՝ վրաց գիտնականներիս, անկեղծորեն ուրախացնում են մեր հայ կոլեգաների նվաճումները, որոնցով մենք՝ ձեր մերձավոր հարևաններն ու եղբայրները, հպարտանում ենք ձեզ հետ միասին։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման պատմական տարեթիվը բերկրանքով և հանդիսավորապես նշում է ամբողջ վրաց ժողովուրդը։ Մեր ժողովուրդների եղբայրական բարեկամության կապերն սկիզբ են առնում հեռավոր անցյալից։ Երկու ժողովուրդներն էլ անցել են անհամար և դաժան, օտար զավթիչների դեմ անձնուրաց և հերոսական պայքարով լի միևնույն պատմական ուղին։ Նրանք միասին են պայքարել նաև հայրենի հողում Սովետական իշխանության հաստատման համար։

Սովետական Հայաստանի գիտնականների պանծալի կոլեկտիվին, ամբողջ եղբայրական հայ ժողովրդին ի սրտե մաղթում ենք նոր, խոշոր նվաճումներ ստեղծագործական խիզախումներում, հիանալի աշխատանքային գործունեության մեջ՝ հանուն հարազատ ռեսպուբլիկայի հետագա ծաղկման, հանուն աշխարհում ամենաառաջավոր սովետական գիտության հետագա բուռն զարգացման։

Վերջում հոետորը, ծափահարությունների ներքո, կեցցե է գոչում ի պատիվ ծաղկուն Սովետական Հայաստանի, ի պատիվ Սովետական Միության ժողովուրդների անխախտ բարեկամության, ի պատիվ մեր բոլոր հաղթանակների ոգեշնչող ու կազմակերպիչ՝ հարազատ Կոմունիստական պարտիայի։

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՅՈՒ. Հ. ՄԱՄԵԴԱԼԻԵՎԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Թանկագին ընկերնե՛ր։

Դժվար է բառերով հաղորդել հոգեկան այն մեծ հուզումները, այն բերկրանքը, որ համակում են մեզ, որ ձեր ռեսպուբլիկայի մայրաքաղաք գեղեցիկ Երևանն ենք ժամանել, որպեսզի ձեզ՝ եղբայրական Հայաստանի գիտնականներիդ և ամբողջ հայ ժողովրդին ողջունենք և շնորհավորենք փառապանծ տարեդարձի՝ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման քառասնամյակի առթիվ։

Ադրբեջանական ժողովուրդը ձեր ռեսպուբլիկայի կյանքի նշանավոր տարեթիվը ձեզ հետ միասին, մեր թանկագին եղբայրներ, նշում է որպես իր պայծառ տոնը։ Կասպից նավթահանքերում, Սումգայիթի ինդուստրիալ գիգանտներում, մեր ռեսպուբլիկայի բամբակի դաշտերում այս օրերին տիրում է աշխատանքային և քաղաքական մեծ վերելք։ Ադրբեջանի բանվորներն ու կոլտնտեսականները աշխատանքային սխրագործություններով են նշում Սովետական Հայաստանի փառապանծ տարեդարձը։

Երկու եղբայրական ժողովուրդների՝ ադրբեջանական և հայ ժողովուրդների բարեկամությունը հին և խոր արմատներ ունի։ Այն ստեղծվել է և ամրապնդվել բազում դարերի ընթացքում, տակալով պատմության շատ դաժան փորձություններ։ Այդ բարեկամությունը կոփվել է օտար զավթիչների և տեղական շահագործողների դեմ մղված համատեղ հերոսական պայքարի բոցերում։ Այն սրբագործվել է ռուսական երեք ռևոլյուցիաների և քաղաքացիական պատերազմի բովում։

Այս հարյուրամյակի սկզբում նավթի Բաքվում ծավալված դասակարգային դաժան գոտեմարտերում իրենց ադրբեջանցի, ռուս, վրացի եղբայրների հետ կողք-կողքի արիաբար և անձնվեր մարտնչում էին հազարավոր հայ ընկերներ։ Ադրբեջանի աշխատավորների սրտերում առմիշտ կապրի բոցաշունչ բոլշևիկներ, Կոմունիստական պարտիայի ականավոր գործիչներ Ստեփան Շահումյանի, Սուրեն Սպանդարյանի, Բոգդան Կնունյանցի, Ալեքսանդր Թեկոդայանի, Մելիք Մելիքյանցի և հայ ժողովրդի մյուս պանծալի զավակների հիշատակը, որոնք իրենց կյանքը նվիրաբերեցին պրոլետարական ռևոլյուցիայի գործին։ Սովետական իշխանության հաղթանակի համար Ադրբեջանի աշխատավորների պայքարի պատմության շատ վառ էջեր կապված են հայ ժողովրդի հիանալի զավակ, հավատարիմ լենինյան Անաստաս Իվանովիչ Միկոյանի անվան և գործունեության հետ։

Կենսագործելով մեծ Լենինի անմահ պատգամները, Անդրկովկասի աշխատավորներն իրենց երկրամասը դարձրել են ազգային խաղաղության նմուշ, ծաղկուն սոցիալիստական ռեսպուբլիկաներ։

Հայ ժողովրդի հաղթանակների և նվաճումների մեջ մեծ ծառայություններ են պատկանում Հայաստանի գիտնականներին, ձեզ, մեր թանկագին բարեկամնե՛ր։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան իր գոյության 17 տարում աճել ու դարձել է սովետական ու համաշխարհային գիտության խոշոր և հռչակավոր գիտական կենտրոններից մեկը։

Թանկագին բարեկամնե՛ր։ Այս անմոռանալի օրերին, երբ մեր անծայրածիր Հայրենիքի բոլոր ժողովուրդները հանդիսավորապես նշում են հայ ժողովուրդի բերկրալից տոնը, մենք՝ Ադրբեջանի գիտնականներս, ամբողջ հոգով եղբայրական Հայաստանի գիտնականներին և ամբողջ հայ ժողովրդին նոր, է՛լ ավելի մեծ հաջողություններ ենք ցանկանում ժողովրդական տնտեսության, գիտության և կուլտուրայի բոլոր բնագավառներում, մեր երկրում ծավալուն կոմունիստական շինարարության, մեզ բոլորիս համար սրբազան գործում։ (Ծափահարություններ)։

ՍՍՌՄ-Ի ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՍԵՍԻԱՆ

Հոկտեմբերի 27-ին ՍՍՌՄ-ի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Գիտությունների ակադեմիաների միացյալ սեսիան շարունակում էր իր աշխատանքը։ Տեղի ունեցան գիտության տարբեր ճյուղերի սեկցիաների առավոտյան և երեկոյան նիստերը։

Ֆիզիկայի և աստղագիտության սեկցիայում լսվեցին ու քննարկվեցին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Ֆիզիկայի ինստիտուտի մի խումբ հեղինակների զեկուցումները կոսմիկական ճառագայթման մեջ մյու-մեզոնների բևեռացման հետազոտության և անցումային ճառագայթման տեսության մի քանի հարցերի մասին։

Մեծ հետաքրքրությամբ դիմավորվեց ակադեմիկոս Վ. Համբարձումյանի հաղորդումը գերնոր աստղի բռնկման մասին։

ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ալիխանյանը զեկուցեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Ֆիզիկայի ինստիտուտի կողմից էլեկտրոնային օղակաձև արագացուցչի կառուցման մասին։ Նա մասնավորապես ասաց, որ դեռևս մի քանի տարի առաջ պարզ դարձավ, որ պրոտոնների արագացուցիչներում կատարվող հետազոտություններին զուգընթաց անհրաժեշտ են նաև այնպիսիները, որոնցում ռմբակոծող մասնիկները լինեին հինգ միլիարդ էլեկտրոնվոլտից ավելի էներգիայի էլեկտրոններ և ֆոտոններ։ Մինչև օրս աշխարհում ոչ մի տեղ չկան հիշյալ էներգիան ունեցող էլեկտրոններ ու ֆոտոններ արտադրող արագացուցիչներ։

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Ֆիզիկայի ինստիտուտում կառուցվող վեց միլիարդ էլեկտրոնվոլտ էներգիա ունեցող էլեկտրոնային օղակաձև արագացուցիչը չափազանց կարևոր միջոց կդառնա նուկլոնների կառուցվածքը հետազոտելու և էլեմենտար մասնիկների հիմնական հատկություններն ուսումնասիրելու համար։

Այնուհետև հռետորը հանգամանորեն բնութագրում է կառուցվող արագացուցիչը, խոսում է նրա առանձնահատկությունների մասին։ Վերջում նա նշում է, որ այդ ունիկալ բարդ մեքենայի նախագծի իրագործումը հայ գիտնականներից պահանջեց լուծել մի ամբողջ շարք դժվարին ֆիզիկական խնդիրներ, որոնք կապված են մագնիսային դաշտում լույսի արագությանը մոտիկ արագություններով էլեկտրոնների շարժման հետ, ինչպես նաև լուծել բազմաթիվ բարդ ինժեներային պրոբլեմներ։

Տեխնիկական գիտությունների սեկցիայում զեկուցումներով հանդես եկան Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ի. Եղիազարովը՝ ջրային ռեսուրսների օգտագործումը և դրա հետ կապված չլուծված հարցերը հիդրավլիկայի և հիդրոաերոդինամիկայի ասպարեզում, տեխնիկական գիտությունների դոկտոր Ա. Անանյանը՝ հունային պրոցեսների դինամիկայի որոշ հարցերը գետերի էրոդիայի բազիսի իջեցման պայմաններում, տեխնիկական գիտությունների թեկնածու Մ. Թորգոմյանը՝ Սևանա լճի մակարդակը բարձր նիշի վրա պահելու պրոբլեմի հետ կապված ջրատնտեսական հետազոտությունները և տեխնիկական գիտությունների թեկնածու Ա. Մխիթարյանը՝ մեծ ջրավազանների և ցամաքի մակերեսից գոլորշիացման հաշվարկի տեսությունն ու մեթոդիկան և Սևանա լճի ապագա ջրային բալանսը թեմաներով։

Քիմիական գիտությունների սեկցիայում մեծ ուշադրությամբ լսվեցին ակադեմիկոս Ն. Մ. Դուբինինի զեկուցումը՝ «Ֆիզիկական ադսորբցիայի տեսությունը և ադսորբենտների գործնական կիրառությունը» և ակադեմիկոս Ի. Կունյանցի զեկուցումը՝ «Նոր կանցերոլիտիկ պեպտիդներ», ինչպես նաև Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Բաբայանի հաղորդումը՝ ամոնիակային միացությունների բազայի վրա մոնոմերների սինթեզի մասին, պրոֆեսոր Պ. Գոգորիշվիլու հաղորդումը՝ նիկելի հիդրազինական կոմպլեքսային միացությունների սինթեզի և հատկությունների մասին, քիմիական գիտությունների թեկնածու Մ. Հուսեյնովի հաղորդումը՝ ցածրամոլեկուլյար ալկանների բլորացման միջոցով կատալիզատորի եռացող շերտում քլորածխածնի ստացման մասին, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Նալբանդյանի հաղորդումը՝ շղթայական ճյուղավորված ռեակցիաների ընթացքում տարբեր միացությունների հետ ջրածնի և թթվածնի ատոմների տարբերային ռեակցիաների արագությունների հաստատները որոշելու մասին և քիմիական գիտությունների դոկտոր Ն. Ենիկոլոպյանի (Մոսկվա) հաղորդումը ցածրաջերմաստիճանային պոլիմերացման կինետիկ առանձնահատկությունների մասին։

Գրականության և լեզվի սեկցիայի նիստում լսվեցին Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի դիրեկտոր, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ի. Ի. Անիսիմովի զեկուցումը «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և համաշխարհային գրականությունը», Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Կարինյանի զեկուցումը՝ «Գրականագիտությունը Սովետական Հայաստանում», բանասիրական գիտությունների դոկտոր Տ. Շարաձենիձեի զեկուցումը՝ «Տիպոլոգիական համեմատության պրոբլեմները արդի լեզվաբանության մեջ» թեմաներով։

Տնտեսագիտական և փիլիսոփայական գիտությունների սեկցիայում աշխույժ հետաքրքրություն առաջացրեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Տ. Խաչատուրովի (Մոսկվա) զեկուցումը «Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների տնտեսական արդյունավետության մասին»։ Այստեղ լսվեցին նաև տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա. Գունիայի հաղորդումը՝ Վրաստանի և Հայաստանի վարչա-տնտեսական շրջանների տնտեսական կապերի մասին, Գ. Գվելեսիանիի հաղորդումը՝ Վրացական ՍՍՌ-ի օրինակի հիման վրա լեռնային շրջանների տնտեսական շրջանացման փորձի մասին։

Տեղի ունեցան նաև մաթեմատիկայի ու մեխանիկայի, երկրաբանական, կենսաբանական, բժշկա-կենսաբանական և պատմական գիտությունների սեկցիաների նիստերը։

ՍՍՌՄ և Անդրկովկասի ռեսպուբլիկանների Գիտությունների ակադեմիաների միացյալ սեսիան շարունակում է իր աշխատանքը։ (ՀՀԳ)